

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2019թ.

N-----Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ  
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երկաթգծի փողոցի հ. 28 շենքի հ.5՝ 68.41 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.31012019-01-0165 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սարգիս Գուրգենի Բարսեղյանին, Կարեն Բարսեղյանին, Ադուն Չիլչիլյանին, Արթուր Բարսեղյանին, Վերոնիկա Բարսեղյանին և Սարգիս Կարենի Բարսեղյանին:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

### «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երեբունի վարչական շրջանի, Երկաթգծի փողոցի **հ.28** շենքի **հ.5՝ 68.41**քմ ընդհանուր մակերեսով բնակարանի նկատմամբ ձևակերպել Սարգիս Գուրգենի Բարսեղյանի, Կարեն Բարսեղյանի, Ադուն Չիլչիլյանի, Արթուր Բարսեղյանի, Վերոնիկա Բարսեղյանի և Սարգիս Կարենի Բարսեղյանի սեփականության իրավունքը:

Երկաթգծի փողոցի **հ.28** շենքի **հ.5** բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման **հ.31012019-01-0165** վկայականի տվյալների՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Սարգիս Բարսեղյանը իր ընտանիքի անդամների հետ սկսած **1973** թվականից հաշվառված բնակվում է քննարկվող հասցեում /հիմք՝ **14.03.2019**թ «Երեբունի» համատիրության և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության **15.05.2019**թ. **հ.22/7-1842** տեղեկանքներ/: Վերջինիս հետ համատեղ բնակվում և հաշվառված են կինը՝ Վերա Վարդանյանը, ով հրաժարվել է մասնակցել բնակարանի մասնավորեցման գործընթացին, որդին՝ Կարեն Բարսեղյանը, հարսը՝ Ադուն Չիլչիլյանը, թոռները՝ Վերոնիկա և Սարգիս Բարսեղյանները և մյուս որդին՝ Արթուր Բարսեղյանը, ով մանկուց առաջին կարգի հաշմանդամ է /հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության տեղեկանք տրված **12.05.1995**թ./ և Երեբունի վարչական շրջանի ղեկավարի որոշմամբ ճանաչվել է անգործունակ, ում խնամակալ է հանդիսանում մայրը՝ Վերա Վարդանյանը:

Քննարկվող բնակարանը փաստացի տասնյակ տարիներ շարունակ օգտագործվում է Սարգիս Բարսեղյանի ընտանիքի կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայությամբ պայմանավորված, այն մինչ օրս չի սեփականաշնորհվել (մասնավորեցվել):

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ տրամադրված տեղեկանքների համաձայն՝ Սարգիս, Կարեն Բարսեղյանների և Ադուն Չիլչիլյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև վերջին հինգ տարիների ընթացքում վերջինիս կողմից կնքված անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի **հ. 41**-Ն որոշման հավելվածի /Օրագրի/ **3**-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Օրագրի **4**-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի (Ծրագրի)4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքները, ուստի վերոհիշյալ անձանց սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ  
ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ  
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող  
բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ  
իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ